

Եւ լռութեան մէջ ճամբաներուն կը լըսուին
 Կըճըրտումներ ակռաներու թաթաթաբուր.
 Յազար բուեր ճամբայ կ'ելլեն դէպի թու
 Սարերըդ սեւ, եւ գուժկան
 Ոգի մ'իր թուխ թելերը շուրջ կը պարզէ,
 Եւ Տաւրոսէն Մասիս, Մասսէն Չամլըճա,
 Մեռելութեան մը մէջ խոր
 Կոտորածի փողը տըխո՛ւր կը հընչէ...

Գ

Փակէ՛ որջերդ, Յայաստա՛ն,
 Արեւուն դէմ մի՛ բանար
 Դըմները լայն փապարներուդ՝ որունց մէջ
 Ես կը տեսնեմ դեղին աչքեր գազանի:
 Ծոցըդ փակէ՛, որ խորթ գաւակ մեծցնելու
 Եղաւ սովոր եւ յուռթի.
 Երկու զեղուն ծիծերդ, Եփրատն ու Տիգրիս,
 Թող պահ մ'իրենց մէջ խեղդեն
 Բարբարոս տոհմը շէյխերու, պէյերու:
 Օ՛ն, երախներդ խըցէ՛.
 Ի՛նչ, չե՛ս տեսներ՝ որ որդիներդ հարազատ,
 Դեռ անպատրաստ եւ անզէն,
 Լոկ մուրճերու, սըղոցի
 Ձայնին կ'ըլլան ունկնդիր.
 Տըրեխներուն վրայ իրենց
 Արիւնի տեղ կալերու ցեխն Է դեղին.
 Ի՛նչ, չե՛ս լըսեր՝ որ սաղմոսի՛ մէջ միայն
 Գիտեն կանչել արշալոյսներն հեռաւոր.
 Արօրներուն վրայ յոգնած
 Իրենց կուրծքին մազերը դեռ կը բուրեն